ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

« 18 » մարտ 2021 թ

Ք.Երևան

Որոշում N 0145

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի տեղակալ Սուրեն Ամիրյանս, ուսումնասիրելով.

1) Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 20090094 հանձնարարագիրը,
2) 2020 թվականի հունվարի 20-ի թիվ 20090094 ստուգման ակտը,
3) N 3.9, 3.10 ստուգաթերթերը,
4) 2021 թվականի մարտի 05-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելու մասին թիվ 03/1935-2021 ծանուցագիրը,
5) վարչական իրավախախտումների վերաբերյալ 2021 թվականի մարտի 12-ի N 158 արձանագրությունը,
6) վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ 2021 թվականի մարտի 12-ի N 03/2312-2021 ծանուցումը,
7) Հեղինե Գրիգորյանի կողմից 18.03.21թ. ներկայացված առարկություն:

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Պարզեցի

1. Նկարագրական մաս

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ ք.Երևան, Դրոյի փողոց, թիվ 17 շենք հասցեում գործող «Թիվ 16 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ նաև Ընկերություն), Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 20090094 հանձնարարագրի (Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 24-ի, դեկտեմբերի 03-ի, դեկտեմբերի 07-ի «Հանձնարարագիր 20090094 Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 20090094 հանձնարարագրում փոփոխություն կատարելու մասին» և Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 07-ի «Հանձնարարագիր թիվ 20090094 Ստուգման ժամկետը երկարաձգելու մասին») հիման վրա, 2020 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ իրականացվել է ստուգում:

«Թիվ 16 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում գործում առկա նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Թիվ 16 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության ուռուցքաբան Հեղինե Գրիգորյանի կողմից.

1. չի վարվում «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների նեղ մասնագետների գրառումների գրանցամատյան»-ի ձևը, որով խախտվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի N 35-Ն հրամանի 12-րդ հավելվածի պահանջները (Ստուգաթերթ N 3.9- ի 2-րդ կետի 7-րդ ենթակետ) :
2. գրառումները կատարում է, ոչ թե պացիենտների Քարտերում, այլ իր կողմից վարվող, լրացվող ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ձևին չհամապատասխանող ձևի վրա (Քարտեր NN 35/37, 7146, 37991, 1549, 8007, 884, 9966, 9651, 1274, 5356, 3669, XXIV, 8804, 10392, 983/1, 4257, 401, 8518, 8913, 3761,

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Գևորգյան Անդրանիկ, Հակոբյան Աննա, Քամալյան Աննա, Հարությունյան Արեգնազ, Ավանեսյան Սուսաննա, Գևորգյան Սյուզաննա, Սերոբյան Հասմիկ, Մկրտչյան Թերեզա, Աբրահամյան Մարգո, Նալբանդյան Կարինե, Իսկաջյան Սարգիս, Ղազարյան Ռաֆայել, Միլիտոնյան Հրաչյա), որով խախտվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանի 1-ին հավելվածի պահանջները (Ստուգաթերթ N 3.10-ի 9-րդ կետի 9-րդ ենթակետ):

««Թիվ 16 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության ուռուցքաբան Հեղինե Գրիգորյանը հրավիրվել է մասնակցելու Տեսչական մարմնում (ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129) մարտի 12-ին կայանալիք վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, որին ներկայացել է:

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը 2021 թվականի մարտի 12-ին կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ N 158 արձանագրությունը, որն առձեռն հանձնվել է Հեղինե Գրիգորյանին: Վերջինիս կողմից ներկայացվել է դիմում՝ գործի քննության ծանուցագիրն էլեկտրոնային փոստին ուղարկելու վերաբերյալ, ուստի գործի քննության ծանուցագիր ուղարկվել է նշված էլ. փոստին:

Տեսչական մարմնում մարտի 18-ին ժամը 11:15–ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, որին պատշաճ կարգով ծանուցված Հեղինե Գրիգորյանը չէր ներկայացել: Վերջինս չի ներկայացրել միջնորդություն գործի քննություն հետաձգելու մասին:

2" Պատճառաբանական մաս

Վարչական մարմինը հաստատված է համարում, որ Հեղինե Գրիգորյանի կողմից խախտվել են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ

օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի N 35-Ն հրամանի 12-րդ հավելվածով սահմանված պահանջները:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ավագ և միջին բուժաշխատողները պարտավոր են՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լրացնել, վարել և շրջանառել բժշկական փաստաթղթերը, այդ թվում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Հեղինե Գրիգորյանը (AN0518826, տրված՝ 14"06"2013 թվականին, 039-ի կողմից, հասցե՝ ք. Տաշիր, Կիրովի փողոց, 9 շենք, բն.18):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Վերջինիս կողմից վարչական իրավախախտում կատարելու մեջ առկա չեն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 33-րդ և 34-րդ հոդվածներով սահմանված վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOUR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Նշված իրավանորմից հետևում է, որ օրենսդիրը վարչական իրավախախտման առկայության հիմքում դրել է մեղքի առկայությունը, որը կարող է դրսևորվել դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Վարչական մարմինը գտնում է, որ Հեղինե Գրիգորյանի կողմից իրավախախտումը կատարվել է անզգուշությամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ 1-ին մասի համաձայն՝ «Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Վարչական մարմինը, իրականացնելով գործում առկա հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, հաստատված չի համարում սույն որոշման նկարագրական մասի 2-րդ կետով արձանագրված խախտումը:

Վարչական մարմինը, անդրադառնալով Հեղինե Գրիգորյանի առարկությանը, հայտնում է, որ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի թիվ 35-Ն հրամանը, որը կրում է նորմատիվ բնույթ և ենթակա է պարտադիր կատարման, սահմանում է «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների նեղ մասնագետների գրառումների գրանցամատյան»-ի ձևաչափը: Այն

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

հանգամանքը, որ Հեղինե Գրիգորյանը վարում է այլ գրանցամատյան (մատնանշված գրանցամատյանը չի ներկայացվել) չի ազատում վերջինիս օրենքով սահմանված պարտադիր վարման ենթակա գրանցամատյանը վարելու պարտականությունից:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին»:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պարտադիր վարման ենթակա բժշկական (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթղթեր չվարելը առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև վաթսունապատիկի չափով:

3. Եզրափակիչ մաս

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 230-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին մասով՝

Որոշեցի

1. Հեղինե Գրիգորյանին՝ որպես խախտում թույլ տված անձի, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը խախտելու համար՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.18-րդ հոդվածի 2-րդ մասով ենթարկել վարչական տույժի՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԼՈՒՄՆԱՍՊԱՍՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTHCARE SERVICES ADMINISTRATIVE BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

2. Սույն որոշումը ծանուցել Հեղինե Գրիգորյանին (ք. Երևան, Պարոնյան 4, բն. 4/ ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Կիրովի փողոց, 9 շենք, բն.18):

3. Սույն վարչական ակտն ուժի մեջ է մտնում մասնակիցներին իրազեկելու հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել ակտն ընդունած Տեսչական մարմին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ ՀՀ վարչական դատարան:

5. Իրերի և փաստաթղթերի հարցը լուծվել է:

Շնորհակալություն համագործակցության համար՝

X

ՍՈՒՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ

Signed by: AMIRYAN SUREN 2001840748 ՍՈՒՐԵՆ ԱՄԻՐՅԱՆ

Ինձ բացատրվել է, որ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 1-ին մասի, տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Ծանոթություն՝

Իրավախախման համար կիրառվող տուգանքի վճարման պետբյուջեի հաշվի համարը՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրավախախտումների համար կիրառվող տուգանքների և պատժամիջոցների մուտքեր N900005024097:

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107